№ 146 Հինգշաբթի Դեկտեմբերի 25 1886 Հինգշաբթի Դեկտեմբերի 25 № 146

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ԱՌԱՋԻԿԱՑ 1887 ԹՒԻՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղրամյան և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց վիպական գրուածները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի նկատողութիւն. Նամակ Երևանից. Նամակ Բագուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմական օրինագծեր. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Վիէննայի հրէաները.

ՀԱՅՈՑ ՎԻՊԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՆԵՐ

—

Հասարակութեան ժամանակակից կեանքը վէպի ձևով ներկայացնելը այլ և այլ ազգութիւնները տարբեր կերպով են հասկացել։ Այդ է պատճառը որ ամեն մի ազգութիւն ունի իր սեփական, ինքնուրոյն դպրոց վիպական գրականութեան։

Ֆրանսիացիք, մինչև վերջին ժամանակ, հետևում էին, շատ քիչ բացառութեամբ, բոմանտիական դպրոցին և կարելի է ասել որ իսկապէս նրանք են ստեղծել վիպասանութեան բոմանտիական դպրոցը։ Այդ դպրոցը՝ կեանքը և տիպերը ներկայացնելիս, չէ խորշում անբնական, արուեստական, շինծու գաղափարներ, անցքեր և տիպեր ստեղծելուց. նրա մէջ կեանքի իրականութեան խոր և խղճմտաւոր դիտողութիւնը և ուսումնասիրութիւնը, հոգեբանական նուրբ քննութիւնը՝ երկրորդական տեղն են բռնում, իսկ աւելի տիրապետում է երևակայականը։ Մի պայծառ բացառութիւն ֆրանսիական այդ բոմանտիական դպրոցի մէջ կազմում էին Բալզակի բոմանները, որոնք յայտնվում են իրանց բէալականութեամբ, նուրբ և սուր հոգեբանական քննութեամբ։ Այդ է պատճառը, որ այժմեան Ֆրանսիայի վիպագրութեան բէալական գրողները Բալզակին են համարում իրանց դպրոցի հիմնող, նախահայր։

Վիպասանութեան բէալական ուղղութիւնը Ֆրանսիայում շատ նոր է, և այժմ, եթէ կարելի է այսպէս ասել, նա սկսել է արդէն միւս ծայրայեղութեանը հասնել։ Այնպիսի բէալական գրողներից յետոյ, ինչպէս Ֆլօբէր, Գոնկուր եղբայրներ, Զօլա և Դօդէ, սկսել են երևալ նորերը, որոնք բէալականութեան մէջ չափ ու սահմանն անցնելով, ստեղծեցին վիպասանական այն դպրոցը որ հիմնվում է միմիայն կեանքի արտակարգ պատահարների և քրէական անցքերի վրա, մի դպրոց, որի հիմքը ոչ թէ մարդուս հոգեբանական ճիշդ և նուրբ քննութիւնն է, բայց որի նպատակը՝ սարսափ ազդող անցքերի նկարագրելն է, հոգեկան հիւանդոտ դրութեան, յանցանքների, քրէական գործողութիւնների ներկայացնելն է....

Հայոց վիպագրողները, որոնք աւելի ծանօթ են Ֆրանսիական վիպական դպրոցի հետ, քան թէ գերմանական, և մանաւանդ անգլիական բուն բէալական և նուրբ հոգեբանական դպրոցի հետ, իրանց թոյլ ստեղծագործութիւնների մէջ մինչև այժմ գտնվում են ֆրանսիական, այն էլ զլխաւորապէս սկզբնական՝ բոմանտիական վիպական դպրոցի ազդեցութեան տակ։

Հայ վիպագրողը չը գիտէ դիտել և ուսումնասիրել իրականութիւնը, ընդունակ չէ մարդուս սրտի արտայայտութիւնները ճիշդ և նուրբ հոգեբանական քննութեանը ենթարկելու։ Հայոց բոմանները, կատարելապէս զուրկ լինելով հոգեբանական ճիշդ քննութեան որ և է նշոյլից, հիմնվում են կամ միմիայն արտաքին կեանքի նկարագրական կողմի վրա, կամ ազգասիրական տենդէնցիայի վրա, կամ սարսափ ազդող անբնական, շինծու երևոյթների վրա։

Եւ նոյն իսկ այն ժամանակ, երբ մեր գրական, վիպական ասպարէզի վրա յայտնվում է այնպիսի մի հեղինակ, ինչպէս տիկին Սրբուհի Տիւսաբն է, որը եթէ չասենք մի նոր դարագլուխ է կազմում հայոց վիպագրութեան մէջ, գոնէ նոր, մինչև այժմ չեղած տարը է մտցնում հայոց բոմանի մէջ, այն է հասարակական տենդէնցիա, ձգտում հնացած կազմակերպութիւնը վերանորոգելու,—դարձեալ այդ գովելի, համակրելի և օգտաւէտ տենդէնցիայի հետ միասին, տիկին Տիւսաբի բոմանները մնում են իրականութիւնից, բէալիզմից զուրկ, մնում են իրանց ձևերով ֆրանսիական բոմանտիական՝ անբնական դրպրոցի հետևող։

Մեր սեղանի վրա դրված է այդ հեղինակի վերջին ստեղծագործութիւնը՝ „Արաքսիա“ վէպը։ Չէ կարելի չը խոստովանվել որ բոմանի մէջ անցկացրած տենդէնցիան վերին աստիճանի համակրելի, յարգելի և օգտաւէտ է, այն է ձգտումը՝ ապացուցանելու հասարակական ժամանակակից կեանքի մէջ կնոջ անկախ աշխատանքի անհրաժեշտութիւնը։ Բայց ի՞նչ միջոցներ է գործ դնում հեղինակը իր այդ գովելի նպատակին հասնելու համար։ Նա դրա համար դիմում է ֆրանսիական հնացած բոմանտիական դպրոցի գործ դրած միջոցներին և ընդունված ձևերին. իրականութիւնը, իրական կեանքի դիտողութիւնը, հետազօտութիւնը և ուսումնասիրութիւնը թողած՝ հեղինակը, որպէս՝ զի միայն իր նախագծված տենդէնցիան մինչև վերջն անցկացնի իր բոմանի մէջ, ներկայացնում է մեզ անբնական, արուեստական թէ լաւ և թէ վատ տիպեր, զօռով բերում, յարմարեցնում, սազացնում է իր բոմանի չափից դուրս խճճված ֆաբուլայի մէջ՝ անցքեր, դէպքեր, պատահմունքներ....

Ֆրանսիական խճճված ինտրիգայի վրա հիմնված այդ վիպասանութեան մէջ բոլոր գործող անձնաւորութիւնները՝ խօսում, դատում և գործում են ոչ թէ իրանց բնաւորութեան, հասկացողութեան համեմատ, ոչ թէ այնպէս, ինչպէս կեանքի մէջ հաւանական է որ այդ մարդիկ կը խօսէին, կը դատէին, կը գործէին, այլ այնպէս՝ ինչպէս հեղինակն է կամենում, որպէս զի անպատճառ կատարվի այն, որ ցանկանում է հեղինակը։ Բոմանի մէջ գործող անձինք, որոնք իրանց հասկացողութեամբ հակառակ են հեղինակի նախագծված տենդէնցիային, —մեծ մասամբ անբնական հրէշներ են, իսկ կնոջ անկախ վիճակի, կնոջ աշխատանքի կուսակիցները,—խօսում են ոչ թէ իրանց բերանով, այլ հեղինակի բերանով։ Հեղինակ տիկինը այնքան յափշտակվում է իր գեղեցիկ գաղափարներով, որ մինչև անգամ մի տասն, կամ տասն և երեք տարեկան մեռնող աղջկան այնպէս հասունացած կերպով է խօսեցնել տալիս, ինչպէս կարող է խօսել միմիայն ինքն հեղինակը....

„Արաքսիայի“ մէջ, կարելի է վստահութեամբ ասել, տիպերի մեծ մասը նոյն իսկ այդ բոմանի ամենահամակրական տիպերը, հոգեբանապէս ճիշդ չեն, իրական կեանքից վերցրած չեն, այլ հեղինակի ձեռքով pour l'occasion (պատեհութեան համար) ստեղծած, շինած տիպեր են։

Եւ դարձեալ տիկին Տիւսաբ այս բոպէիս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԻԷՆՆԱՑԻ ՀՐԷԱՆԵՐԸ

—

Վիէննայի հրէաների թիւը կազմում է ընդհանուր բնակչաց մէկ հինգերորդ մասը, այսինքն մօտ երկու հարիւր հազար։

Սրանք երեք տեսակ են՝ ունգարացի, գալիցիացի և բոհէմիացի հրէաներ, որոնք իրանց բարքառով, տիպերով, ծէս և սովորութիւններով միմեանցից զանազանվում են։ Իսկ սրանցից շատ կայ ինքնիրան մի տեսակ կազմող բուն աւստրիական, այն է Վիէննայի հրէան, որոյ մեծագոյն մասը իսրայէլական և քրիստոնէական խառնուրդի սերունդ և երկու տարրից էլ մի յատկանիշ իւրացուցած լինելով, այս տեսակը կամ բնիկ տեղացին, կամ երկար ժամանակ Վիէննայում բնակութիւն հաստատողը կարող է միմեանցից զանազանել։ Շարունակ քրիստոնէաների հետ սերտ յարաբերութիւններով կապված, ընկերական, առևտրական կապերով միացած, միանգամայն ընտանեկան կենակցութեանց մէջ խառնված լինելով, Վիէննայի հրէաները բարքառով, վարքով, բարքով եթէ բոլորովին նման չեն վիէննացւոց, դէթ շատ են մօտեցած սրանց։ Ինտելիգէնցիայի դասին մէջ այսպիսիք բազմաթիւ են, և որպէս զի իսրայէլականութիւնը խոչնդոտ չը լինի իրանց ասպարէզի յառաջադիմութեան, պետական պատուաւոր աստիճանների բարձրանալու համար գրկում են քրիստոնէութիւնը։

Միջին դասակարգի հրէայ քաղաքացիք էլ իրանց զաւակները առանց խորութեան ուղարկում են քրիստոնէից վարժարաններ։ Երեխաները երթևեկելով այս վարժարաններում, թէպէտ կրօնքով իսրայէլացի, բայց անխտիր կարդում սովորում են քրիստոնէական վարդապետութիւն, մանաւանդ քրիստոնեայի վարքով բարքով կրթվում են։ Ծննդեան տօնի օրերում իսրայէլացի ծնողք, երեխաների աղաչանքները չը կարողանալով մերժել, ծննդեան ծառեր են ընծայում, զատկի տօներումն էլ երեխաները ուրախացնելու համար հաւկիթները կարմիր են ներկում, և այլ սրա նման քրիստոնէական սովորութիւններ մտցնում են մոլսիսական օրինաց ապստամբ այս նոր քաղաքակրթեալ երիտասարդները։

Մի հանգամանք ևս օգնում է հրէից տեղիս քրիստոնէական դաստիարակութիւն յարել տալու յօժարութեան, այն է կրօնքի խստապահութիւնը։ Ի հարկէ անուս և մոլեռանդ գալիցիացին մոլսիսական խիստ և դժուարատար օրէնքները մեծ համբերութեամբ տանում է, բայց լուսաւորեալ հրէան անտանելի է գտնում այդ բարբարոսական սովորութիւնները, որոնց զլուխ գործոցն է թլփատութիւնը, այնուհետև գալիս են ծոմապահութիւն, օրերով անօթի մնալ, անվերջանալի աղօթքներ, երկար մաղթանքներ, որոնք կարդացվելու են վերարկուներ հագնելով, թերևս վրա կաշիներ փաթաթելով, ճակատնուն վրա փոքրիկ տապանակներ կապելով և շարունակ օրորոցի նման տատանվելով։

Այս պաշտամունքներից զատ ուրիշ անթիւ դժուարութիւններ կան կեանքի հասարակ հանդամանաց և տնական խնամակալութեանց մէջ, որոնք շատ թանգ են նստում առանց անյարմարութիւնները հաշվի առնելու, զորօրինակ, բարուանպետին կնքովը կնքված միս ուտել, եզան առջևի կողմը ուտել, ետևի կողմը չուտել, կարագը մսի հետ չեփել, չը խառնել, զատ զատ ուտել, հաւը ոչ կարագով, այլ սագի ճարպով տապակել, շաբաթ օրվայ կերակուրները ուրբաթ օրից պատրաստել և այլն։ Սրանց և ոչ միոն է անում վիէննացի հրէան. նա համարեա հրաժեշտ տուած է այդ ամենքին, համոզված լինելով որ եթէ հաւատարիմ մնայ իր աւանդական օրինաց գործադրութեան, զզուելի պիտի լինի քրիստոնեայ քաղաքացւոց և չը պիտի կարողանայ սրանց հետ կենակցել։

Բացի յիշեալ կերարկութիւններից քաղաքական ամուսնութիւնը ևս զգայապէս նպաստում է Քրիստոսի որդիքը Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ զաւակների հետ ընդ միշտ հաշտեցնելու։ Արդէն մէկ կողմէն մկրտութեամբ պակվելը, միւս կողմէն քաղաքական ամուսնութիւնը աստիճանաբար պակասեցնում են վիէննացի ընիկ հրէից թիւը, յամրաքայլ բայց քայլ առ քայլ հրէական տարրքը քրիստոնէական անհուն տարրին մէջ հալվում ձուլվում է, և եթէ այսպէս շարունակէ, տարիների ընթացքում զաւառացի հրէաներից զատ մայրաքաղաքում ուրիշ հրէայ չը պիտի մնայ։ Կան չափահաս հրէաներ, որոնք հրէայ ծնված, բայց այլ ևս հրէայ չեն, որովհետև մկրտված են. սրանց ասում են «մկրտեալ հրէայ». սրանց մէջ տակաւին զգալի է լինում անցեալ հրէութեան հոտը։ Իսկ մկրտեալ հրէի քրիստոնեայ ծնված և մեծացած երիտասարդ որդին հօրը չափ հրէայ չէ նկատվում, միայն թեթև կերպով «մկրտված հրէի զաւակ» են անուանում, բայց մկրտված հրէի թոռը այլ ևս հրէայ չէ համարվում, նրա մէջ չէ մնում այլ ևս ոչ հրէական ծագում և ոչ խմոր, և նա ճակատը բաց, գլուխը բարձր բռնած իբրև հարազատ քրիստոնեայ ամեն տեղ մտնում ելնում է։

Վիէննացի հրէուհիները առհասարակ գրաւիչ մի գեղեցկութիւն ունեն։ Մազերնին սև և ի բնէ աւլեծածան են գանգուր խոպոպիներով, աչքերնին, յօնքերնին սև են, երեսնին անփայլ սպիտակ մի գոյն ունի, կազմուածքնին շատ սիրուն է, վերջապէս նկատելի գեղեցիկներ շատ կան. ընդհանուրը այր մարդոց մէջ հաղուագիւտ է գեղեցիկը։ Անխառն բուն իսրայէլացի երիտասարդը ընդհանրապէս տգեղ է. քիթը տձև է, արծուի կըտուցի է նմանում, հաստ շրթունքներ, որոնց ստորին մասը մսոտ և դէպի վայր տարածված լինելով զզուելի մի բերան է պատկերացնում։ Ուստի իսրայէլական գեղեցիկ սեռը խենթի նման սիրում է գերմանական խարտեաշ քրիստոնեայ երիտասարդին, որուն կապոյտ աչքերը, ջնորհալի քիթը և կեռասագոյն շրթունքներով համբուրելի բերանը և այնու հանդերձ ազնիւ բնաւորութիւնը մագնիսի նման քաշում են, մոռացնել տալով իրան կրօնք, ոսկի և Պաղեստին։

Փոխադարձաբար հրէայ երիտասարդն էլ զմայլում է քրիստոնեայ վիէննացի աղջկան պարզասիրութեան վրա, այս վերջինին բնածին ձիրքերը և ազնիւ յատկութիւնները հրապուրում են իրան, և աւելի սիրում է քրիստոնեայ աղջկան հետ պըսակվել—թէև հաւատը ուրանալ հարկ լինի—քան թէ իր կրօնակցին հետ։

Այսպէս ուրեմն, մի իսրայէլացի աղջկան քրիստոնեայ գերմանացու և վիէննացի հրէայն քրիս-

իրաւամբ համարվում է մեր գրականութեան մէջ ամենալաւ վիպագրողներից մին. ի՞նչ կը լինեն միւսները....

Ինչքան էլ գովելի նպատակ ունենայ բոմանտիական դպրոցին պատկանող մի վէպ, նրա տիպերն ու նկարագրած եղելութիւնները միշտ լինում են անբնական, օդային, կեղծ և շինծու։ Իրականութեան ուսումնասիրելուն, խոր կերպով կեանքի երևոյթների հետազօտելուն, իրական կեանքի դիտելուն, մարդուս սրտի հոգեբանապէս ճիշտ և նուրբ քննելուն,—դեռ ևս ոչ մի հայոց վիպագրող չէ հասել։ Նրանք բոլորն էլ դեռ ևս ապրում են երևակայական աշխարհում, իսկ իրական կեանքի գաղտնիքները դեռ ևս անլուծելի, անբացատրելի, անմատչելի են մնում նրանց դիտողութեան համար, մարդուս սիրան ու հոգին դեռ ևս անմատչելի են մնում ըմբռնական հոգեբանական վերլուծման համար։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՆ

«Մշակի» 143 համարում ես դուրս էի բերել այն բոլոր ծախքերը, որոնք անհրաժեշտ կերպով բարդվում են մեր ցորենի գների վրա մինչ արտասահմանեան շուկաները հասցնելու համար։ Շտապում եմ յայտնել, որ իմ ցոյց տուած ծախքերի գումարները ես կարելի եմ համարում մի քանի կօպէկ պակասցնել և ահա ինչու. Երևանի, Ալէքսանդրապօլի և Նոր-Բայազէդի ցորենները Աղստաֆա հասցնելու համար ես ընդունել էի ճանապարհածախք պուդին 30 կօպէկ։ Բայց ահա ինչ են գրում իմ թղթակիցները Երևանից և Ալէքսանդրապօլից։

Երևանից. «Քրահն այստեղից (քաղաքից) մինչ Աղստաֆա ձմեռը 30—35 կօպէկ է, ամառը 20—25 կօպ., ուղղակի գիւղերից ուղարկվածները քանի կօպէկ աւելի աժան են նստում։... Այստեղ սովորութիւն է, որ առնողները իրանք են գնում գիւղերը, աւելի ձեռնտու լինելուն պատճառով»։

Այս տողերից ես եզրակացնում եմ, որ նոյն իսկ Երևանի ցորենի համար 30 կօպ. ճանապարհածախք շատ է. և եթէ ի նկատի առնելու լինենք, որ առևտրականները կաշխատեն աժան ժամանակը աւելի ուղարկել, քան ձմեռվայ ամիսներին, կը համոզվենք, որ Երևանի ցորենի համար ճանապարհածախք միջին թւով պէտք է որոշել 27 կօպէկ։

Ալէքսանդրապօլից ինձ գրում են. «Ալէքսանդրապօլից մինչև Աղստաֆա տարվայ ամեն եղանակին մեծ մասամբ ֆուրգոններով են ցորեն ուղարկում. իսկ մայիսի կէսից մինչ յունիսը սկզբները, երբ գիւղականները ցանքից պրծնում են և մասամբ էլ աշնան, երբ կալակուտից են պրծնում, ցորենը գիւղական սայլերով է ուղարկվում, ամենաաժան քրահը լինում է 17—18 կօպէկ պուդին, ամենաթանդը 27—28 կօպ.։ Այնպէս որ միջին թւով Ալէքսանդրապօլից և շրջակայ գիւղերից մինչ Աղստաֆա պուդը 22 կօպէկ է նստում։»

Միւս կողմից ես գտայ, որ 10 կօպէկ պուդին նաւի ծախք Փոթիից և Բաթումից մինչ Միջերկրական ծովի երկիրները, որպէս միջին թիւ, շատ է, այլ իրականութեան աւելի մօտ կը լինենք, եթէ այդ ծախքը ընդունենք լինենք 8 կօպէկ։

Այդ բոլորի վրա հիմնված մենք վերախմբում ենք «Մշակի» 143 համարում ցոյց տուած ծախքերի գումարները այսպէս։

Մինչ Միջերկրական ծովի գլխաւոր շուկաներ հասցնելը պահանջվում է ծախք.

1. Ախալքալաքի ցորենի համար.....	37	կօպ.
2. Եկատերինի շրջանների ցորենի համար.	45	»
3. Հաջի-Կաբուլի ցորենի համար.....	51	»
4. Նոր-Բայազէդի ցորենի համար.....	52	»
5. Ալէքսանդրապօլի ցորենի համար....	53	»
6. Երևանի ցորենի համար.....	59	»

Կուզէի շտկել նաև № 144 համարում տպված յօդուածիս այն տեղը, որտեղ խօսվում է Ալէքսանդրապօլի. ցորենի արտահանման օգտի մասին արդիւնաբերողների տեսակէտից։ Մի պուդ ցորենի արտադրութիւնը հանում է Շիրակի գիւղացուն ոչ թէ 50 կօպէկ, այլ շատ աւելի պակաս, այնպէս որ իմ արած հաշիւները Շիրակի և այլ տեղերի. գիւղացիների դրութիւնների նկատմամբ մասամբ անտեղի է։

Դր. Ա.ա. Արասխանեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Դեկտեմբերի 13-ին

Կովկասը, ինչպէս մեզ յայտնի է, հարուստ է գլխաւորապէս նաւթով, գինիներով, բամբակով, հացահատիկներով, մրգեղէններով և հանքերով (այս վերջինները դեռ վերջնականապէս չեն հետազօտված)։ Մեր երկրի այդ բոլոր հարստութիւնները, ի հարկէ, բաւական դրական էին մեր ժողովրդի առաջադիմութեան, ապահովութեան և մեր երկրի բարօրութեան համար, եթէ միայն նրանցից կարողանար օգտվել ինքն տեղացին։ Բայց, դժբաղդաբար, պէտք է խոստովանած, որ մեր երկրի բնական հարստութիւններով օգտվելու ձիրքից մենք—կովկասցիներս զուրկ ենք և միայն ընդունակ ենք այս և այն չարչիութիւնով պարապել՝ խաբել, մանրավաճառութիւն անել և ահա բոլորը, և մեր երկրի այդ բնական հարստութիւնները թողնել օտարին։ Չը նայելով «Մշակի» այնքան նախազգուշացնելուն, մենք մնացինք անտարբեր և աստարէզը մնաց օտարին։ Եւ ահա, մինչև մենք մեզ յատուկ մանր մունր չարչիութեան ետնից ենք ընկած, մեր երկրի հարստութիւնները մէկը միւսի ետևից անցնում են օտարի ձեռքը։

Շատ ժամանակ դեռ չէ անցել, ինչ նաւթը ընկել է եւրոպացիների (Նոբէլի) ձեռքը, որի հետքին թէ շատ կարողանում էին մրցել մեր տեղական նաւթատէրերը, բայց ահա երևացել է միլիոնատէր Բոտչիլդ, որի առջև դողում է ինքն Նոբէլ, իսկ տեղացին, մանաւանդ հայը, բոլորովին պիտի կորչի Բոտչիլդի ոյժի առջև։ Կը տեսնենք մենք, որ չի անցնի մի տասնեակ տարի և տեղացին բոլոր նաւթատէրերի հորերը կանցնեն այդ հսկայ հարուստի ձեռքը և տեղացու հետքն անգամ չի երևայ։

Հացի առուտուրը, ինչքան յայտնի է, ահա երկու տարի է, ինչ սկսված է և այն ևս եւրոպացիների ձեռքով, որոնք բացելով իրանց գրասենեակները Փոթի, Բաթում և Թիֆլիս, գնում են մեր տեղացիների ձեռքից հացը և իրանք արտահանում արտասահման։ Նոյնը կասենք և հացի վերաբերմամբ, որ չի անցնի մի տասն տարի և այդ ճիւղը կանցնի օտարների ձեռքը։

Գինեգործութեան վրա, ահա, սկսել է դնել իր ձեռքը եւրոպացին և այն էլ հրէայ Բոտչիլդ։

Եւ այս բոլորը նրա համար միայն, որ մենք ինքներս չենք դնահատում միացած ոյժով գործելը, որպէս զի կարողանանք մրցել օտարների հետ։ Մեր այս նամակի նպատակից դուրս լինելով խօսել նաւթի, բամբակի, հացահատիկների, մրգեղէնների և այլ արդիւնաբերութեանց վերաբերմամբ, մենք առ այժմ կը խօսենք Երևանի այգիների և գինեգործութեան վերաբերմամբ։

Կարդալով Բոտչիլդի վերաբերմամբ այն, որ նա սկսել է և Կովկասի գինեգործութեամբ պարապել, մենք սարսափում ենք, նախատեսնելով այն վտանգը, որ սպառնում է Երևանին։ Երևանի խաղողը ու գինիները, չնորհիւ միայն մեր անհասկացողութեան և անհետաքրքրութեան, չնորհիւ մեր նահապետական սիստեմայի, չնորհիւ մեր անմիաբանութեան, անյայտ են մնացած աշխարհին և Թիֆլիսից հեռու չեն անցնում։ Երևանը, որը աւելի նախադաս է Կովկասի ամեն կողմերից խաղողով, յետ է մնացած, և այսօր Կախէթի գինին կարողացել է հռչակ ստանալ, իսկ Երևանինը դեռ մնացել է անյայտութեան մէջ։ Այս բոլորը առաջ է եկել մեր անտարբերութիւնից և մեր տգիտութիւնից։ Եւ այդ մեր անտարբերութեանը զոհ կը գնան մեր հազարաւոր այգիները, մեր հարիւրաւոր տեսակ խաղողները։ Ինչ է մեր այգետէրերի ապագան, նոյնը.—ինչ որ հասել է մասամբ մեր նաւթատէրերին. եւրոպացին կը խլէ մեզանից մեր այգիները և մեզ, այգետէրերիս, կը դարձնէ իր այգեպանները։

Երևանցիները, որոնց համարեա կէս մասը պարապվում են գինեգործութեամբ, ի հարկէ, հին նահապետական սիստեմայով, պէտք է մի ժամանակ մի տեսակ պրոլետարիատ կազմեն, որը պէտք է օրական վարձով ծառայէ օտարին իր սեփական հողը մշակելու և օտար արդիւնաբերողին շահ տալու համար։

Այժմ, չնորհիւ պ.պ. Ն. Թայիրեանցի և Կ. Ափրիկեանցի, ահա երկու տարի է, որ գինեգործութեան հմուտ ձեռքով պատրաստվում են տեղիս գինիները և արտահանում Օդեսա։ Մեր այդ արդիւնագործները, պէտք է խոստովանված, մեծ օգուտներ են վերցնում և մեծ մրցումն են անում այնտեղ։ Բայց ինչքան որ ժողովրդին բարի օրինակ տալու տեսակէտից նայելով, օգտակար է այդ ձեռնարկութիւնը և ինչքան էլ մեծ աշխատութիւն և դրամ է գործ դրվում այդ բերքի մշակութեան վրա, այնքան էլ զգուշութեամբ պէտք է տանել այդ գործը, մանաւանդ երբ Բոտչիլդի պէս հսկայ կապիտալիստը հետզհետէ մօտենում է մեզ։ Բաղուի նաւթատէրերի դրութիւնը լաւ օրինակ պէտք է լինի մեր գինեգործներին։ Նրանք ինչքան և ցանկանում են ծաղկեցնել տեղիս գինեգործութիւնը և արտահանելով նպաստել տեղիս այգեգործութեան առաջադիմութեանը, այնքան էլ նրանց համար պէտք է թանդ լինի այդ արդիւնաբերութեան ապագան։ Մենք համոզված ենք, որ պարոնները լաւ են հասկանում միացած ոյժով գործելու օգուտը. նրանք այնքան յաջող դիրք բռնած ունեն ժողովրդի մէջ, որ նրանց դժուար չի լինի տեղիս գինեգործութեանը սպառնացող ապագայ վտանգին առաջն առնելու։ Միակ հնարքը այդ այն է, որ Գանձակի գինեգործական ընկերութեան պէս այստեղի Երևանի այգետէրերն էլ կազմեն մի ընկերութիւն, որի անդամները լինեն իրանք այգետէրերը, և այսպէս միանալով կը կարողանան ապահովել թէ իրանց և թէ տեղիս գինեգործութեան ապագան։ Միակ հնարքը դա է, և դրա ինիցիատիվան մնում է նոյն պարոններին, այն է Թայիրեանցին և Ափրիկեանին։ Եթէ ոչ, հեռու չէ այն ապագան, երբ Թիֆլիս-Զուլֆեան երկաթուղու բացվելուն պէս ամբ. ղջ Երևանը, Արարատեան տափարակի բոլոր գիւղերով և այգիներով՝ կանցնեն եւրոպացիների ձեռքը, իսկ մենք կը լինենք նրանց մշակները։ Այն ժամանակ, ի հարկէ, արդէն ուշ կը լինի։

Ս. Տ. Մ.

տոնեայ աղջկան հետ պսակվելու դէպքերը յաճախադէպ են Վիէննայում։ Ընդհանրապէս հրէուհին քրիստոնէութիւնը գրկելով մկրտվում և պսակվում է, կամ առանց մկրտվելու կրօնքը թողնելով անկրօն է լինում (confessionslos) և քաղաքական միութեամբ տմուսնանում է։ Նախ քան մկրտութիւնը, կղերը հաւատափոխ հրէային, մանաւանդ հրէուհուն երկար ու բարակ ուսուցանում են քրիստոնէական կրօնքի սկզբնական պայմանները, որոնց աւանդութիւնը ամիսներ է տեւում։ Աւելորդ է ասելը, որ կրօնափոխ հրէան, կամ հրէուհին, կրօնական ջերմեռանդութեամբ և ներքին համոզմամբ քրիստոնէութեան դիմած չը լինելով, երբեմն յիշեալ երկարատև վարդապետական քարոզներից ձանձրանում և փոխանակ կրօնափոխ լինելու, կրօնաթող է լինում։

Ունգարիայի և Բոհէմիայի հրէաները մասամբ տասնաբանեայ պատուիրանքները կատարելու և այլ կրօնական ծիսապահութիւնները յարգելու մէջ Վիէննայի հրէաների չափ թոյլ չեն։ Իսրայէլական հաւատոյ հարցերում թէպէտ այնքան խըստապահանջ չեն, բայց Վիէննայի հրէաների չափ էլ կրօնական աղատամտութիւն չունեն. Վիէննայի հրէան ամենից աղատամիտ և ապստամբն է։ Սա մինչև անգամ զանց է առնում թլփատութիւնը, որ, ըստ այլոց, հիմն է մովսիական օրինաց։ Շատերը կան որ անթլփատեալ են, մանաւանդ նոր սերունդը, ի բաց առեալ Բոտչիլդի ընտանեաց անդամները, որոնք տակաւին հաւատարմաբար վերապահած են թլփատութեան նահապետական սովորութիւնը։

Բայց եթէ կայ մի տեսակ հրէայ, որ բառին բուն նշանակութեամբ հրէական տիպ և իսրայէլական պատկերն է ներկայացնում, նա է Գալիցիայի լեհ հրէան։ Սա անսրբագրելի է, անուղղելի է, սա չէ հասկանում ոչ քաղաքակրթութիւն, ոչ նորութիւն, ոչ բարդքում, և ոչ ինչ։ Առանց թողնելու փարաւոնի ժամանակից մնացած սովորութիւնները, ճչդիւ հետևում է Եգիպտոսի անապատական կեղտոտութեանց։ Սրանց մէջ ամենակեղտոտը համարվում է ամենաբարեպաշտ հրէան։ Գարշելի մի արարած է ոչ միայն քրիստոնեայ վիէննացոց, այլ նոյն իսկ հրէաների շրջանում. մինչև անգամ այս վերջինները միմեանց անարգական մի խօսք ուղղելու համար Polnischer Jud ասում են։ Հագած ունին մինչև ծնկները երկայն կօշիկներ, որոնց գարշելի հոտը գալիս է մի քանի քայլ հեռուից։ Վերարկուին մինչև ոտքերը երկայն «կաֆտան» կոչված հրէական զգեստն է, որ հայելիի կամ կոյանոցի սև ջրի նման կը փայլին։ Ցարիների ընթացքում աղտը և կեղտը խուզի խաւեր են կապած վերարկուին վրա։ Վիէննացին ասում է որ, եթէ Գալիցիայի մի ծերունի հրէայի կաֆտանը մի կաթսայի մէջ դրվի և ջրով խաչվի, մի լեհ հրէական հարսանեաց մսեղէնները խորովելու չափ ճարպ դուրս կը գայ միջից։

Երկու ականջների կողքից ոլորեալ խոպոպիքներ ունեն, որ հրէական բարբառով «պէյզէ» է կոչվում, բայց զուարճախօս վիէննացիք դրան անուանում են Lausschaŭkel (ոջիլների տատանոց), այսինքն ոջիլները երբ գլխի դաղաթու շոգից նեղանում են, իջնում են այդ խոպոպիքների վրա և այնտեղ տատանվելով զովանում են։

Չէ կարելի ասել, որ Վիէննայում հակահրէական շարժում կամ կիրք գոյութիւն ունի։ Ընդհակառակը, հրէան Վիէննայի համար է և Վիէննան հրէայի համար անհրաժեշտ պիտոյք է դարձած։ Ոչ ոք չէ կարող այնքան ճարտար գործունէութեամբ մայրաքաղաքին մամուլը կառավարել, որքան հրէան. սրան ապացոյց, որ համարեա ամբողջ լրագրութիւն և տպարանապետութիւն հրէաների ձեռքն են, այսինքն ընդհանուր խմբագրական մասը քրիստոնեան է կառավարում, բայց վարչութեան և տնօրինութեան մասը ֆինանսական տեսակէտից հրէաները մեծ յաջողութեամբ դարձնում են։ Ինչ տեսակ գործ որ լինի, հրէի պէտքը զգացվում է։ Եւ որովհետև գործ կոչված բանը փողով կը լինի, և հրէայ կոչված արարածն էլ փող է նշանակում, հետևաբար չը կայ մի գործ առանց հրէի, այսինքն առանց փողի։ Միայն առևտրի անընդհատ մի շրջան անել և քիչ օգուտով շուտ շուտ շատ բան ծախել ուզելով, ամեն տեսակ ձեռակերտական ապրանքների վարկը կոտրում են, յարգը փչացնում են։ Ծախում են իրանց գործարանների հազար ու մէկ տեսակ արդիւնաբերութիւնք՝ զգեստ, կօշիկ, ճերմակեղէն և այլն, ամենքն էլ անհաւասալի կերպով էժանագին, բայց ամենքն էլ «տակը փոս, վրան Փիլիպպոս»։ Մի ձեռք ամառվան մութ գոյն զգեստ 10 գուլդէն, բայց ոչ արեգակին, ոչ էլ անձրևին կարելի է հանել. արեգակ տեսնէ կը կարմրի, անձրևի հանդիպի կը դեղնի։ Կօշիկ մի զոյգ 4 գուլդէն. կակուղ հողի վրա մարդ քալէ, 2 շաբաթ կը դիմանայ, քարի վրա մի շաբաթ, իսկ ձիւն եկած և հալվելու սկըսած օր, նախ կօշիկին կրունկները կը թափին, յետոյ տակի կաշին, այնպէս որ համարեա բոկոտն տուն կը վերադառնաք։ Մի շապիկ. տեսքով դեղեցիկ, բայց մի անգամ եթէ լուացարարի տաք, վերադարձին ձեր շապիկը չէք կարող ճանաչել, խարբալ դարձած է։ Ահա այս և սրա նման խաբեպատիր ճանապարհներով խայտառակում են թէ անունին և թէ ծախած ապրանքին։ Բայց առևտրականները չատ անինչան են, ինչ տեսակ գործարանական ապրանք կուզէ թող լինի. եթէ հրէական է, անպատճառ խաբեբայ և անպիտան բան է, այսու հանդերձ պարզամիտները այնքան շատ են, որ այդ խարդախ ապրանաց շտեմարաններում յաճախորդք անպակաս են։ Շատերն էլ գլխանալով ապրանքի ստորութիւնը, կամայ ակամայ էժանութեանը չը դիմանալով առնում են, իրանց ստիպողական պէտքը դէթ առժամանակեայ կերպով հոգալու համար՝ ահա այս պատճառով է որ աղքատ դասակարգին անմատչելի թանդ, բայց դիմացկուն ապրանք ծախողները հրէաների անպարկեշտ մրցումից վնասվում են, մինչդեռ այդ աժան կարծվածները աւելի թանդ են նստում, քան թանդ համարվածները. սակայն, ինչպէս ասացի, ամբոխի փոքրագոյն մասը գիտակցաբար, և մեծագոյն մասը անգիտակցաբար դիմում են հրէաներին և խաբվում։

Հրէան, վաճառականական որ և է մի ապրանաց ճիւղ չի ընտրի իրան համար։ Նա կը հետևի միշտ հանգամանաց պահանջներին։ Երբ, զոր օրինակ, մի քանի տարի պատրաստ զգեստ ծախեց, յետոյ տեսաւ որ կեղծութիւնը յայտնվելով յաճախորդները այլ ևս չեն գալիս, խանութը կը փակէ և կը սկսի ցորենի առևտրով պարապվել. սրա մէջն էլ եթէ չաջողվի, ոգելից ըմպելեաց մի կըրպակ կը բանայ, և այսպէս հետզհետէ վաճառականութեան մասնաճիւղերը կերպարանափոխելով և իւրաքանչիւր ձեռնարկած գործից, ըստ բաղդի բերման, կամ լաւ ևս, ի չնորհս խորամանկ միջոցների, օգուտներ քաղելով կանգ կառնու. լումայափոխութեան, կամ վաշխառութեան ասպարիզում կը կայանայ իր ճշմարիտ կոչումը։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

22 դեկտեմբերի

Արդէն հաղորդեցի խմբագրութեանդ, որ ամսիս 19-ին պատահած անգութ հրդեհը մի երկու ժամվայ մէջ լափեց հայոց ուսումնարանի ամբողջ շինութիւնը և մեր մանուկները ստիպված մի առ ժամանակ պիտի զրկուին ուսումից. յայտնել էի նմանապէս, թէ հաւանական է որ յունվարից կըրկին իր կարգով ուսումը շարունակվի: Այժմ շտապում եմ հաղորդել, որ այդ իմ ենթադրութիւններս ճշդվում են: Տեղիս հոգաբարձութիւնը հաստատ վճռել է չը դադարեցնել ուսումը, այլ արձակուրդներից յետոյ անպատճառ ուսումը սկսել: Այս դէպքում հոգաբարձուներին իր ջերմ աջակցութիւնն է ցոյց տալիս տեղիս հայ հասարակութիւնը թէ նիւթապէս և թէ բարոյապէս: Գանվեցան և այնպիսի ազգայիններ էլ, որոնք մինչև անգամ ձրիապէս իրանց տները առաջարկեցին ուսումնարանի համար: Այդպիսիների թիւը երեք է. բայց դեռ յայտնի չէ թէ որ շինութիւնը աւելի յարմար կը լինի ուսումնարանի համար:

Ընկերութեան խորհուրդը և պ.պ. հոգաբարձուները վճռել են մի նոր շինութիւն կառուցանել ուսումնարանի համար: Դրա համար ստորագրութիւն է բացվել ժողովրդի մէջ և, պիտի խոստովանած, շատ յաջող է գնում: Հէնց առաջին երեկոյեան ստորագրութիւնը հասաւ 3,000-ի, իսկ հետևեալ օրը, մինչև ժամի 11-ը դարձաւ 4,000 ր.: Այդ գումարը ստորագրել են վեց հոգի, որոնցից պ.պ. Կրասիլնիկեանց և Լալայեանց մի մի հազար ռուբլի, իսկ մնացածները հինգ հինգ հարիւր:

Ստորագրութիւնը դեռ շարունակվում է և յոյս կայ, որ Բագուի հայ հասարակութիւնը, որ միշտ առատաձեռն է եղել դէպի ազգային ամեն մի օգտաւէտ գործ, այս անգամ ևս ամենայն սիրով կը մասնակցի իր քաղաքի մանուկների կրթութեան գործին: Արդէն սոքա գործով ապացուցանում են, թէ որքան մօտ է իրանց սրտին մատաղ սերնդի կրթութիւնը: Աւելորդ չեմ համարում կցել և այն, որ նուիրատուութեան մասնակցում են, անխտիր, հասարակութեան ամեն մի դասը, թէ հարուստ և թէ աղքատ, թէ վաճառական և թէ մըշակ: Աւելորդ չէ յիշել և այն, որ վճռված է այս երկու օրս գրաղարանն էլ բացանել: Դեռ «Ապահովութեան ընկերութեան» գործակալի հետ հաշիները չեն վերջացրած:

Հրդեհի պատճառները դեռ մինչև այժմ էլ չը պարզվեցան:

Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուսաց լրագիրներում կարդում ենք, որ ամբողջ հարաւային Ռուսաստանում շարունակվում են գարնանային եղանակները:

—

ՐՕՍՏՕՎ քաղաքից մեզ գրում են, որ մինչև դեկտեմբերի կէսը այդտեղ ձիւն եկած չէր, միայն ժամանակ առ ժամանակ անձրևներ են գալիս: Քաղաքի փողոցներում անանցնելի ցեխ է գոյանում եկած անձրևներից:

—

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հետևեալը: «Մայրաքաղաքիս հայ ուսանողները իրանց սովորութեան համեմատ, յունվար ամսին տալու են մի թատրոնական ներկայացում: Կը խաղան «Քանդած օջախ» Սունդուկեանցի պիէսան: Դեկտեմբերի 15-ին Անտառային ճեմարանի ուսանողների ներկայացումն էր յօգուտ նոյն ճեմարանի չքաւոր ուսանողների, Ազնուականների ժողովի դահլիճում: Հասարակութիւնը այնպէս էր լցրել դահլիճը, որ եկամուտը պէտք է շատ նշանաւոր լինէր: Այսպէս չեն հայ ուսանողների տեղիս ներկայացումները, քանի որ տեղերի շատ մասը դատարկ են մնում:»

—

Ս ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են: «Զմեռը այստեղ շատ ուշ սկսվեց և այժմս էլ դեռ չը կայ հիւսիսային սառնամանիքը: Նեվա գետը դեռ ևս կատարելապէս չէ հագել իր սովորական ձմեռային մուշտակը, այլ միայն փոքր առ փոքր պատրաստվում է ծածկվել իր հաստ կեղևով:»

—

Պարսկաստանի Արդաբիլ քաղաքից ստացանք հետևեալ լուրը: «Այսօր, դեկտեմբերի 7-ին, շընորհիւ Արդաբիլի դատաւոր՝ Մուստաֆա-Ղուլի-Խան-Ամիր-Թումանի լունվեցաւ վերջապէս զարադաղցի յայտնի աւազակապետ Ֆարուղ-խանը, որ և անմիջապէս չղթայակապ Թավրիզ ուղարկվեցաւ:»

—

Պարսկաստանից ստացած մասնաւոր նամակով մեզ հաղորդում են, որ Արդաբիլի նահանգում բերքը այս տարի, համեմատած անցեալ տարվայ հետ, քիչ է և թանգ: Ցորենի խալվարը (25 պուդ) արժէ 5 թուման, ալիւրը 6 թուման, դարին $5^1/_2$ թուման:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում է մեր թղթակիցը դեկտեմբերի 22-ից հետևեալ ուրախալի լուրը: «Այրված հայոց ուսումնարանի տեղ, նոր շինութեան կառուցանելու օգտին, բացված է հանգանակութիւն: Ամենաեռանդուն կերպով դործը առաջ է գնում: Թէ հարուստ վաճառականներից, թէ արհեստաւոր, թէ կանայք և օրիորդներ, փող են ժողովում: Մի օրվայ մէջ 7200 ռուբլի է ժողոված. յոյս կայ մինչև 20 հազարի հասնի: Ուրեմն կարճ ժամանակից յետոյ կունենանք պատրաստի շինութիւն ուսումնարանի համար, նոյնպէս և մի թատրոնական դահլիճ: Ուսումնարանի համար առժամանակ երեք անձինք ձրիաբար առաջարկում են իրանց տները:»

—

Եկատերինօդարից, պ. Բաղդասար Մէլիքեանց խնդրում է մեզ տպել հետևեալը: «Որովհետև կինս և ես բացինք մասնաւոր ուսումնարան Եկատերինօդար քաղաքում, ուստի ծանօթներիս և ազգականներիս յայտնում եմ որ իմ հասցէն պէտք է գրել այսուհետև այսպէս. Екатеринодаръ (Куб. обл.) Въ Частное училище Меликіанцъ. Հակառակ դէպքում նամակները ինձ չեն հասնի:»

—

Մենք լսում ենք որ այս օրերս Խորէն վարդապետ Ստեփանէ կանչվեցաւ Էջմիածին:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ամսիս 25-ին կը տրուի այստեղի կլուբում մի ընտանեկան-գրականական երեկոյ, որին կը կցվի և երաժշտական մաս ևս պ. Կարա-Մուրզայի ղեկավարութեամբ: Երեկոն յօգուտ գրադարանի է: Այդ մի և նոյն նպատակով մի խումբ երիտասարդներ մտադիր են մի ներկայացում ևս տալ:»

—

Դեկտեմբերի 15-ին Պետերբուրգում կայացաւ նաւթային յանձնաժողովի նիստը, որի ժամանակ, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի ռուս լրագիրները, նաւթի վրա տուրք նշանակելու կոմն էին, բացի ֆինանսների մինիստրութեան ութ ասոցիանատներից, Նոբելի ներկայացուցիչ Բէլեամին, Բագոզինը, Լիսենկո, և Վօյկով: Միւս ներկայացուցիչները ընդդէմ էին նաւթի վրա տուրք նշանակելուն, որոնց մէջ և պրոֆէսոր Մէնդելէեվ, Կովկասեան կառավարչապետի ներկայացուցիչ Գուլիշամբարով, Բագուի նաւթագործների ներկայացուցիչներ՝ Իրեցկի, Լազարեվ և Լիանոզով, նոյնպէս և Ս. Սչաստլիվցեվ:

—

Վաղը, ամսիս 26-ին, ուրբաթ օր, առաւօտեան ժամի 11-ին նշանակված է Թիֆլիսի դումայի արտակարգ նիստ, որտեղ պէտք է քննվի քաղաքային վարչութեան զեկուցումը անչարժ կալուածքների վերագնահատութեան վերաբերմամբ:

—

Ամսիս 26-ին, 27-ին, և 28-ին Թիֆլիսի թատրոնում օպէրային ներկայացումներ կը տրվեն թէ առաւօտները և թէ երեկոները: Ընդհանրապէս այն ներկայացումները, որոնց մասնակցում են Կամենսկայա, Պրիանիշնիկով և Մէդվէդեվ, թատրոնը կատարելապէս լի է լինում:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են: «Շուտով լրանալու է Երևանի թեմական դպրոցի գոյութեան յիսնամեակը: Յանկութիւն կայ արժանաւոր կերպով տօնելու այդ նշանաւոր տարեդարձը»:

—

Մեր ընթերցողներին յայտնի՝ Լազարեվի գործը դեկտեմբերի 13-ին վերջացաւ Պետերբուրգում: Յայտնի է որ Լազարեվ մենամարտութիւն ունեցաւ մի սպայի հետ՝ իր քրոջ պատճառով: Այդ մենամարտութեան համար Պետերբուրգի նահանգական դատարանը, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, դատապարտեց Լազարեվին երկու տարի և վեց ամիս ձերբակալութեան բերդում:

—

ՕԴԷՍԱՅԻ լրագիրները հաղորդում են, որ Լօնդօնի վաճառականները ներկայացրին Օդէսայի զեներալ-նահանգապետին մի բողոքագիր, այն պատճառով, որ Օդեսայից արտահանվող ցորենը շատ վատ տեսակից և անմաքուր է, հակառակ Անգլիա ուղարկվող նմուշներին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԾԵՐ

—

Զինուորական օրինագծերը, պատերազմական նոր օրէնքների հաստատութիւնը դեռ շարունակում է առաջնակարգ խնդիրներից մէկը լինել եւրոպական պետութիւնների համար, թէև ներկայ ամառեական ճգնաժամը և սոցիալական շարժումները առանձին ուշադրութեան նիւթ կարող են տալ: Մի կողմից բուռն կերպով բողոքում են ծանր հարկերի դէմ, բողոքում են զինուորական ծանր և ամայրդիւն ծառայութեան դէմ, բողոքում են ժողովրդի մեծամասնութեան աղքատութեան և թշուառութեան դէմ, միւս կողմից, թէ Աւստրո-Ունգարիայում, թէ Գերմանիայում, թէ Ֆրանսիայում, թէ Իտալիայում և թէ ուրիշ շատ տեղեր՝ զինուորական նորանոր օրինագծերով ուզում են անուշադրութեան տալ շատ աւելի ծանրակշիռ խնդիրներ: Գերմանիան համարում է Ֆրանսիայի զօրքերի թիւը և գերմանական պատերազմական մինիստրը գոչում է բայխստագի մէջ. «շուտ, շուտ վճռեցէք. սպասել անկարելի է»: Աւստրիան չը կարողացաւ սառնասրտութեամբ նայել իր չորս կողմը կատարվող զինուորական փոփոխութիւնների վրա և այնտեղ արդէն զինուորական օրէնսդրութեան մէջ մեծ փոփոխութիւններ եղան: Գերմանական կառավարութիւնը հէնց այս րոպէիս էլ ճգնում է այդ խնդրի վրա: Ռէյխստագի մէջ կազմած յանձնաժողովը նիստեր է կազմում, դռնփակ կերպով, և կամենում է դաղտնի կերպով, ծածուկ ճանապարհով զինուորական հրաչքներ գործել: Կառավարութիւնը հրամայում է այդ խնդրին պետական դաղտնիքի ձև տալ, բայց անհնազանդ մամուլը ամեն բան լոյս աշխարհ հանեց, և այս րոպէիս մեր առջև է դրած յանձնաժողովի պարապմունքների և ձեռքի տակ ունեցած նիւթերի մանրամասն նկարագիրը: Յանձնաժողովի նիստերի միջոցին պատերազմական մինիստրը միշտ նոյնն է պնդում յանուն կառավարութեան և խնդիրը աւելի ստիպողական անելու համար, հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ օտար պետութիւնների պատերազմական ոյժերի մասին: 38 միլիոն ժողովուրդ ունեցող Աւստրիան խաղաղ ժամանակ ունի 282 հազար զօրք: «Աւստրիայի պատերազմական ոյժերը աւելի քիչ են, քան Ռուսաստանինը, ասաց մինիստրը, պէտք է այնպէս անել, որ Գերմանիան և Աւստրիան աւելի ուժեղ լինեն, քան Ֆրանսիան և Ռուսաստանը: Անհրաժեշտ է, որ հարևան պետութիւնները համոզվեն թէ անընկճելի է Գերմանիան»: Եւ ահա պատերազմական մինիստրի ստիպողական ճառը վիճաբանութիւնների առաջին նիւթ է տալիս յանձնաժողովի մէջ: Վիրեղհօրստ պահանջում է, որ կառավարութիւնը աւելի ճիշդ և պարզ կերպով յայտնի թէ ինչ յարաբերութիւններ ունի. իսկապէս Գերմանիան դէպի Աւստրօ-Ունգարիան, ինչ նշանակութիւն ունեն Ֆրանսիայի այժմեան զինուորական պատրաստութիւնները, և թէ Ռուսաստանի յարաբերութեան իսկական հիմքը ինչ է:

Յանձնաժողովի անդամներից մէկը յայտնում է, որ Գերմանիային իսկապէս ոչ թէ Ֆրանսիայի կողմից է վտանգ սպառնում, այլ մի ուրիշ կողմից: Ֆրանսիան միայն այն ժամանակ պատերազմի դաշտը կը դուրս դայ, երբ Ռուսաստանը ոտի կանգնի,—յայտնում է անդամներից մի ուրիշը:

Ընդդիմադրական կուսակցութեան անդամ Ռիխտէր խօսեց երկար և իիստ կերպով. «Պէտք է ճշդութեամբ պարզել կառավարութեան քաղաքական հայեացքները, ասաց նա: Եթէ պատերազմի վտանգ կայ, այդ դէպքում ոչինչ միտք չունի զօրքը չատացնել պատերազմի նախորդ օրը, այդ կը նշանակէ զուր ծախքեր անել: Աւստրիայի զօրքը կազմում է գերմանական զօրքի միայն $^2/_3$ մասը: Ներկայ քաղաքական հարցերի մէջ Աւստրիայի դրութիւնը աւելի փափուկ է, քան Գերմանիայինը. սակայն Աւստրիան այնքան չէ յուզվում և զինուորական օրէնքների համար այնքան չէ ուզեորվում, որքան Գերմանիան: Ֆրանսիայի և Գերմանիայի պատերազմական ոյժերը համեմատելիս պէտք է աւելի հեռատես լինել: Գերմանիան 1879 թվին հաւաքեց 144,000 զինուոր, այդ թիւը 1884 թվին հասաւ 160,000-ի: Այդ տարին Ֆրանսիան հաւաքել է 154,845 զինուոր:

Կառավարութեան կողմից պատերազմական մինիստրը ասում է, որ Գերմանիայի պահեստի զօրքից շատերը գնում են Ամերիկա. բայց չէ՞ որ Ֆրանսիան էլ ունի Ալժիր, Տունիս, Տօնկին, և այդ բանը միշտ պէտք է առանձին ուշադրութեամբ յիշել.... Պատերազմական մինիստրը իր պատասխանի մէջ անհամաձայնութիւն է յայտնում դէպի Ռիխտերի բոլոր կարծիքները, և վիճաբանութիւնները շարունակվում են ամենայն օր: Կառավարութեան կարդադրութեամբ յանձնաժողովի ձեռքն են տրված ռազմագիտական շատ քարտէզներ, որոնց ինչ լինելը հրամայված է դաղտնի պահել: Զինուորական օրինագծի կողմնակիցները առանձնապէս պնդում են արտաքին հանդամանքների վրա: Քաղաքական արտաքին գործերի դրութիւնը նկարագրելով, կառավարութեան կողմնակիցները ուզում են հեռացնել ուշադրութիւնը այն ծանրութիւններից, որը պէտք է դրվի երկրի վրա՝ նոր օրինագծերի շնորհիւ: Այդ իսկ պատճառով առանձին ուշադրութեամբ յանձնաժողովը իր դռնփակ նիստերում ուսումնասիրում է հարևան պետութիւնների պատերազմական ոյժերը: Բայց և այնպէս ընդդիմադրական ոյժը խիստ զօրեղ է: Գերմանական կառավարութիւնը կասկածով է նայում օրինագծի յաջողութեան վրա, և իշխան Բիսմարկ դեռ մի խօսք անդամ չէ ասել այդ խնդրի առիթով: Այդ օրինագծի մերժելը կամ ընդունելը մեծ ազդեցութիւն կունենար եւրոպական պատերազմական քաղաքականութեան տրամադրութեան վրա:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լուրեր են տարածվում, որ Զկրնօգորիան գաղտնի կերպով զինվում է: Այնտեղ հաստատված են որ գարնան հասնելուն պէս Բալկանեան թերակղզու վրա անպատճառ նոր դժուարութիւններ կը ծագին:

—«Standard» լրագիրը հաղորդում է, որ Շվէյցարիայում եղող գերմանացի ուսանողները հրաման են ստացել վերադառնալ և մտնել այն զօրագնդերի մէջ, որոնց թւում նրանք հաշվում են:

—Բոլգարական պատգամաւորութեան եւրոպական պետութիւնների մօտ գնալը օրից օր աւելի մեծ նշանակութիւն է ստանում: Անգլիան որոշ կերպով յայտնեց իր բռնելի ընթացքը, և ինչպէս հեռագիրը մեզ լուր բերեց, արտայայտել է իր կատարեալ բարեկամութիւնը դէպի այժմեան բոլգարական կառավարութիւնը:

—Պոլսից գրում են, որ Բ. Դուռը մտադիր է առաջադրել բոլգարական խնամակալութեանը, որ Արևելեան-Ռումելիայում դադարեցվի զինուոր հաւաքելը:

—Արևելեան-Ռումելիայում ապրող մահմետական ժողովրդի մէջ յուզմունք է տիրապետում այն պատճառով, որ լուրեր են տարածում, թէ մահմետականները կարող են հարկ չը տալ բոլգարական կառավարութեանը և չընդունել նրանց դատարանների վճիռները: Այդ քաղաքականութիւնը մեծ չփոթ է գցում ժողովրդի մէջ:

—Առաջիկայ 1887 թվի սեպտեմբերի 5-ին, Միացեալ-Նահանգների Վաշինգտոն քաղաքում դումարվելու է միջազգային բժշկական ինտերոդ կոնգրեսը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ռումինիայի Իպրայիլ քաղաքից մի ժամ հեռաւորութեամբ Սատ Լիբօվանէաք ասված գիւղը, որ բաղկացած է 600 ընտանիքից և Լիբօվան է կոչվում, ժամանակով Ռուսաստանից գաղթած է: Սրանք ծխախոտ չեն քաշում և ջուր խմած ժամանակը երեսները խաչ են հանում և օտար ազգերը իրանց եկեղեցին չեն թողնում. պաս օրերը չաքար չեն ուտում. թէյ խմած ժամանակ չամիչով և մեղրով կը խմեն. կիրակի և տօն օրերը եկեղեցուց տուն կերթան և կաղօթեն. սուրբ Երրորդութիւնը չեն ճանաչում. ուրիշ ամեն արարողութիւնները ուղղափառ քրիստոնէից պէս է. եկեղեցու մէջ քահանան ծառի կեղևից չինած հոգեթափներ կը հագնի և ժամարարի դգեստները ճիշդ հայկականի պէս են: Ունեն նաև մէկ վանք ծեր մայրապետներով լցված. ամեն շաբաթ գանձանակ են պատացնում վանքի համար. օտար աղգից չեն առնում: Ունեն մի վարժարան բաւական մեծ և ունեն նաև մի քանի փոքր վարժարաններ տան մէջ, որոնց պաշտօնեաները իգական սեռից են: Ունեն մի քահանայ լուսարար և այլն: Կայ նաև մի եկեղեցի ևս, որ քահանայ չունի. իրանց մէջ քիչ գիր իմացող ու գրող անձինք քահանայութիւն են անում. սրանք միւսներից տարբերութիւն ունեն: Բացի դրանից, նաև իրանց տան մէջ երկու եկեղեցիներ ունեն, որոնց պաշտօնեաները,

իրանց միջից կանայք, կը կատարեն եկեղեցու արարողութիւնը: Գերեզման չունեն. ննջեցեալները իրանց տան մէջ են թաղում. երեխաները չեն մկրտում. ունեն մէկ տեսակ գիրք, որի մէջ արական և իգական անուններ են գրված. ամեն օր նրա մէջ նայելով, որ օր որ ծնվել է երեխան, այն օրվայ անունը կը դնեն. հարսանեաց հանդէս չեն կատարում, վերջապէս ծնունդ և ամուսնութիւն գիշերային մթութեան մէջ են կատարում, առանց ոչոքի իմաց անելու: Եթէ հիւանդանան, բժիշկ չեն բերում, թողնում են որ հիւանդը մահառիթ հիւանդութիւնից փոխի աշխարհ: Այս աղանդաւորներին «պապապուխիկ» են կոչում, որ ասել է անհաւատ:

*
* *

Լոնդոնի լրագրները հաղորդում են հետեւեալ տարօրինակ ամուսնութեան մասին: Մի վաթսունամեայ այրի կին սիրահարվեցաւ մի 22 տարեկան ուսանող երիտասարդի վրա: Սկզբում երիտասարդը ծիծաղում էր այդ սիրահարութեան վրա, բայց երբ այրի կինը յայտնեց նրան, որ 12 հազար ֆունտ ստերլինգ դրամար կը տայ իրան, եթէ պսակվի, այն ժամանակ ուսանողը ընդունեց այրիի առաջարկութիւնը և պսակվեցաւ: Նոր պսակվածները վարձեցին մի առանձնացած բնակարան, շրջապատված այգիով, իրանց ամուսնական կեանքի համար: Երիտասարդի հայրը ընդդէմ էր այդ ամուսնութեան. ուստի որդին խոստացաւ 1,000 ֆունտ ստերլինգ օժիտ տալ իր չամուսնացած քրոջը, որի պատճառով և հայրը համաձայնեց: Ամուսնութիւնից յետոյ բաւական ժամանակ անցաւ: Ոչոք չէր տեսնում ամուսնացած երիտասարդին: Մի քանի ամսից յետոյ հայրը ինքը գնաց տեսնելու, թէ որտեղ է որդին և ինչ է անում: Պառաւած նորահարսը ասաց, որ իր մարդը տանը չէ, և որ առհասարակ նա ոչինչ յարաբերութիւն իր ընտանիքի հետ ունենալ չէ կամենում: Այն ժամանակ հայրը յայտնեց ոստիկանութեանը որ իր որդին անհետացել է: Ոստիկանութիւնը խուզարկեց և գտաւ երիտասարդին ննջարանում, կապած մահճակալին թոկերով, և այնքան ամուր կերպով, որ թոկերը կտրել էին խեղճի մարմինը: Երիտասարդը լաց էր լինում երեխայի նման և յայտնեց որ կինը այդպէս է վարվում իր հետ նախանձի պատճառով: Դրանից յետոյ նախանձոտ կնոջը դատապարտեցին կէս տարվայ բանտարկութեան, և ամուսնութիւնը լուծվեցաւ:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 դեկտեմբերի: Ֆօմբօվի փոխադարձ կրեդիտի ընկերութիւնը վերջացնում է իր գործերը:

ԲԵՐԼԻՆ, 22 դեկտեմբերի: «Հիւսիսային գերմանական ընդհանուր լրագրում» տպած է Պօլսից ստացված բողոքը՝ ընդդէմ անգլիական և ռուսական լրագիրների Սուլթանի անձնաւորութեան ուղղված յարձակումներին: Յօդուածի մէջ ասված է, որ Թիւրքիան կարեւոր չէ համարում ընդդիմանալ ռուսաց քաղաքականութեանը, թէև իր շահերը Ռուսաստանի համար չի զոհի:

ԼՕՆԴՕՆ, 22 դեկտեմբերի: Բօլգարական պատգամաւորութեանը այստեղ հաւատացրին, որ Բօլգարիան կարող է դրականապէս յուսալ Անգլիայի և Իտալիայի աջակցութեան վրա: Պատգամաւորութեանը խորհուրդ տուեցին չընտրել իշխան, մինչև որ պետութիւնների մէջ համաձայնութիւն չը կայանայ: Լօրդ Զերչիլի պաշտօնը կը ստանձնի Գօշէն, Գլադստօնի կաբինէտի նախկին մինիստրը:

Կ. ՊՕԼԻՍ, 22 դեկտեմբերի: Այստեղ սպասում են բօլգարական պատգամաւորութեանը յունվարի կէսից ոչ առաջ. մինչև այդ ժամանակ Բ. Դուռը բօլգարական հարցի վերաբերմամբ ոչինչ չի անի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 դեկտեմբերի: Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը՝ նրա ծառայութեան յիսնամեայ յօբելեանի առիթով շնորհված են Բարձրագոյն հրովարտակի հետ միասին Ս. Ալէքսանդր Նեվսկու չքանշանի ադամանդեայ նշանները: Նավթային յանձնաժողովը ընդունեց իր անդամներից մի քանիսի առաջարկութիւնը՝ յետաձգել ակցիզի նախագծի մանրամասնութիւնների քննութիւնը մինչև որ ֆինանսների և պետական կալուածների մինիստրները սկզբունքով կը վճռեն այն հարցը, թէ անհրաժեշտ կարիք կայ արդեօք հէնց այժմ մտցնելու նաւթային տուրքը, թէ աւելի նպատակայարմար կը լինի յետաձգել այդ միջոցը մինչև մեր նաւթային արդիւնաբերութեան ծաղկման աւելի բարեյաջող ժամանակները: Այդպիսով յանձնաժողովի պարապմունքները ժամանակաւորապէս դադարեցվում են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 դեկտեմբերի: Այսօր, իր յօբելեանի տօնի օրը, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը արժանացաւ Բարձրագոյն այցելութեան: Յօբելեարին շնորհաւորեցին Օգոստափառ ընտանիքի շատ անդամները, դիպլոմատիական ներկայացուցիչներ և 70-ից աւելի պատգամաւորութիւններ: «Օրէնսդրութիւնների ժողովածուի» մէջ հրատարակված է Պետերբուրգ-Ազովեան առևտրական բանկի կանոնադրութիւնը: Այդ բանկի հիմնադիրներ են՝ Եակօվ, Լազար և Բօրիս Պոլեակօվները, Լեմնշեվսկի և Լեանդաու: Բանկը բացվում է Պետերբուրգում և իրաւունք ունի բացանել բաժանմունք այնտեղ, որտեղ պէտք կը լինի: Հիմնական դրամագլուխը մի միլիոն բուբլի է, որը կազմվում է հրատարակված 4,000 ակցիաներից:

ԼՕՆԴՕՆ, 23 դեկտեմբերի: Գօշէնի կաբինէտը մտնելու պատճառով, սպասում են որ մինիստրութեան մէջ փոփոխութիւններ կը լինեն: Ասում են որ արտաքին գործերի մինիստր Իդէսլէյ և Հնդկաստանի մինիստր՝ Կրօսս հրաժարական կը տան, և դրանց տեղը կը բռնեն Սալիսբրի և Նորդբրուկ: Լօրդ-Մէրի մօտ եղած նախաճաշիկի ժամանակ, Բօլգարական պատգամաւորութեան անդամ Կալչեվ շնորհակալութիւն յայտնեց Անգլիայի դէպի Բօլգարիա ունեցած համակրութեան համար, և յայտնեց, որ բօլգարացիները կը գործեն այնպէս, ինչպէս որ գործել են մինչև այժմ՝ որպէս զի հանեն կատարեալ անկախութեան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 դեկտեմբերի: «Journal de St. Petersbourg» լրագիրը, Բաստէնբէրգի Բօլգարիա վերադառնալու վերաբերեալ լուրերի առիթով ասում է, որ երկրորդ անգամ նրան իշխան ընտրելը կեղծ-ժողովի կողմից, ընդունված չէ կարող լինել՝ եւրօպական պետութիւններից և այդ պատճառով Բաստէնբէրգի Բօլգարիա դալը վերին աստիճանի կամայական վարմունք և խկպէս սպառնալիք կը լինէր: Այդ փաստը կաւելացնի երկպառակութեան նոր սերմեր արդէն եղած երկպառակութեան վրա: Այդ չատ կարելի է որ համապատասխանում է ստուերում ծածկվող յայտնի կոմբինացիաներին, բայց խաղաղութեանը արևելքում և ընդհանուր հանգստութեանը ծանր վտանգ կը սպառնայ: Ահա թէ ինչու համար մինչև անգամ Ռուսաստանից դուրս տհաճութեամբ են վերաբերվում դէպի այդ վտանգաւոր նախագիծը և ոչ ոք չէ համարձակվում նրան հովանաւորելու պատասխանատուութիւնը յանձն առնել: Ի նկատի առնելով այդ հանգամանքը, կարելի էր յուսալ, որ այդ նախագիծը չի իրագործվի; եթէ որ յայտնի քաղաքական կենտրոններում չը լինէին մի քանի անձինք, որոնք վճռել են, անխտրեմութեամբ խաղաղութիւնը խախտել և արգելք լինել համաձայնութեան հաստատվելուն կառավարութիւնների մէջ:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Դեկտեմբերի 23-ին

Ռուսաց 1 բուբլ Լօնդոնի վրա արժէ		$22\frac{5}{8}$	պէնս.
— — Համբուրգի վրա	—	$192\frac{1}{2}$	պֆ.
— — Փարիզի վրա	—	$238\frac{1}{2}$	սան.
Ոսկի — արժէ	— —	8 ›	70 կ.
Մաքսային կուպօններ	— . .	169 ›	25 ›
Արծաթ — —	— . . .	1 ›	42 ›
Բօրսային դիսկօնտներ	— . .	5 և $6\frac{1}{2}$%	›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի		100 ›	— ›
— — — — 2-րդ	—	99 ›	50 ›
— — — — 3-րդ	—	99 »	50 ›
— — — — 4-րդ	—	99 ›	— ›
— — — — 5-րդ	—	99 ›	— ›
— — — — 6-րդ	—	99 ›	— ›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.		99 ›	50 ›
— — 2-րդ	—	99 ›	87 ›
— — 3-րդ	—	99 ›	87 ›
Նիքլին 5% առաջին փոխառութ.		245 ›	50 ›
— երկրորդ	—	226 ›	75 ›
$5\frac{1}{2}$% րենտա		104 ›	— ›
Ոսկեայ րենտա.		184 ›	75 ›
Նոր կոնսոլիդած փոխառութիւն. .		159 ›	— ›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.		160 ›	50 ›
$5\frac{1}{2}$% գրաւական թղթեր Խերսոնի կալուած. բանկի.		96 ›	75 ›
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.		102 ›	50 ›
— — Պոլտավայի —	—	101 ›	— ›
— — Պետ. Ֆօլսկ. —	—	101 ›	25 ›
— — Կիեվի —	—	101 ›	50 ›
— — Մօսկվայի —	—	102 ›	50 ›
— — Բեսարաբ. Տավր. —		100 ›	75 ›
— — Նիժ. Սամար.	—	101 ›	50 ›
— — Վիլնայի	—	100 ›	75 ›
— — Թիֆլիսի — 27 և 43 տ.		— ›	— ›
— — Քութայսիի - 18 և 43 տ.		— ›	— ›
Վօլժսկո-Կամսկի բանկի ակցիաները		586 ›	— ›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.		269 ›	— ›
Բրյանսկ-Վօլոգդի ընկ.		98 ›	50 ›
Ս. Պետերբուրգի քաղաքային օրլիգացիաներ.		94 ›	37 ›
Մօսկվայի քաղաք. օրլիգացիաներ .		94 ›	87 ›
Օդեսայի — — .		93 ›	50 ›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ. .		— ›	50 ›
Նոր երկաթուղային բիլետա . .		98 ›	87 ›
Պետական բանկի 6-րդ հրատարակութեան տոմսերը		— ›	— ›
Գրաւ. թղ. Ազնաւ. բանկի . . .		99 ›	— ›

Ս. Պետերբուրգի բօրսայի արտադրութիւնը աւելի հանդարտ է:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍ. Յակոբեան. կարող էք ձեր յօդուածը յետ ստանալ խմբագրութիւնից:

ԱՍԽԱԲԱԴ. Ե. Տ. Պ. Ստացանք ձեր 10 բուբլի 1887 թվի «Մշակի» բաժանորդագիրը. սպասում ենք ձեր հացէի: «Эконом. Пол. Тур. Армянъ» բրօշիւրը ուղարկեցինք ձեզ: Մենք ինքներս էլ դիտաւորութիւն ունենք հրատարակել «Շվէյցարիա» առանձին բրօշիւրով:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ДОНСКАЯ ПЧЕЛА“

годъ (XII)

Какъ и въ теченіи минувшихъ одинадцати лѣтъ, будетъ выходить два раза въ недѣлю, по четвергамъ и воскресеньямъ.

Цѣль газеты—служеніе интересамъ Приазовскаго края: разработка вопросовъ, касающихся жизни этого края, своевременное обсужденіе всѣхъ явленій, имѣющихъ близкое соприкосновеніе съ мѣстной жизнью, оглашеніе болѣе или менѣе важныхъ событій, текущія явленія и мѣстныя новости.

Жизнь окружающихъ городовъ и другихъ сосѣднихъ мѣстностей—въ „Донской Пчелѣ“ имѣетъ всегда обширное мѣсто.

Торговый отдѣлъ „Донской Пчелы“, въ которомъ помѣщаются коммерческія свѣдѣнія, доведенъ до самыхъ широкихъ размѣровъ. Онъ особенно важенъ для всего торговаго міра Кубанской, Донской, Терской областей, Екатеринославской, Воронежской и Ставропольской губерній, гдѣ „Донская Пчела“ уже успѣла получить достаточную популярность, какъ необходимое подспорье для торговыхъ сдѣлокъ.

Подписная цѣна:

Съ доставкою въ Ростовѣ на-Дону.		Съ пересылкою иногороднимъ.	
на годъ	6 р. —	на годъ.	7 р.
„ полгода.	3 „ 50	„ полгода	4 „ —
„ 3 мѣсяца.	2 „ —	„ 3 мѣсяца.	2 „ 50

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Письма и деньги адресуются исключительно въ контору редакціи „Донской Пчелы“, въ Ростовъ на-Дону.

Редакція покорнѣйше проситъ Гг. иногороднихъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

ПРЕМІЯ. Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 20-го Декабря сего 1886 года подписныя деньги за 1887 годъ, будетъ разосланъ БЕЗПЛАТНО **Донско-Азовской** русско-армянскій календарь на 1887 годъ, въ которомъ, кромѣ общекалендарныхъ многочисленныхъ свѣдѣній, помѣщены также „Нахичеванъ на-Дону, его прошлое и настоящее“, съ литографированнымъ схематическимъ планомъ города, полнымъ Адресъ-календаремъ городовъ: Ростова, Нахичевава, Таганрога, Новочеркаска, Маріуполя и проч. и проч.

Редакторъ-Издатель **И. А. Тер-Абраміанъ.**

1887 թվին

(ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

„ԱՐՁԱԳԱՆՔ“

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակվի մի և նոյն դիրքով և պրոգրամայով:

Տարեկան բաժանորդագինն է. . . 5 բուբլի:

Կէս տարվանը . . . . . 3 բուբլի:

Թիֆլիսում ստորագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենտրոնական գրավաճառանոցում»:

Օտարաքաղաքացիք դիմում են. Тифлисъ, въ редакцію «Ардзаганкъ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagank»:

Ապառիկ բաժանորդներ չեն ընդունվում:

Առանձին համարները 10 կոպէկով:

Խմբագիր-Հրատարակիչ. ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏՕՆԱԾԱՌԵՐԻ ՀԱՄԱՐ

Վ. ԳՐԻՎՆԱԿԻ ԴԵՂԱՆԻՒԹԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԸ ստացել է մեծ քանակութիւն ընծաների (զարդարանքների և առհասարակ այն բոլոր պարագաների) որոնք անհրաժեշտ են շքեղ և արժան տօնածառեր սարքելու համար:—Օտարաքաղաքացիների համար կայ պատրաստի սարք թէ՝ փոքր և թէ՝ մեծ տօնածառերի համար, 5 բուբլիից մինչև 150 բուբլի արժողութեամբ, որպիսիները անյապաղ կարող են ուղարկվել ցանկացողներին:—Վառող թելեր, տնային բենգալական կրակներ և մանկական հրախաղութիւններ շատ արժան գներով:

5—5

საყოველ-კვირაო სალიტერატურო ჟ სათეატრო გაზეთი

„თეატრი“

ძიიღება ხელის ძოწერა 1887 წლისათვის

(წელიწადი მესამე)

პროგრამა გაზეთი „თეატრი“-სა იგივე დარჩება, რაც 1886 წ. იყო.

„თეატრი“ გამოვა კვირაში ერთხელ, კვირაობით.

ფასი „თეატრი“-სა: წლით—5 მანეთი, ნახევრის წლით—3 მანეთი.

სხვა ვადით ხელის ძოწერა არ ძიიღება.

ხელის ძოწერა მიიღება მხოლოთ „თეატრი“-ს რედაქციაში.

ადრესი: Тифлисъ. Въ редакцію газеты „Театръ“.

7—100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., противъ Музея).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Դրաֆսկայա փողոց, Մուզէյի դիմաց):

ՏՕՆԱԾԱՌԻ ՀԱՄԱՐ

Մեծ ընտրութիւն կարդօնից չինած գեղատեսիլ իրերի, բաղմերանգ մամուռի և զարդարանքների: Վառող թելեր, մագնի, պարաֆինային մոմեր, բազմատեսակ մոմակալներ, զանազանագոյն լապտերներ:

ԲԵՆԳԱԼԵԱՆ ԿՐԱԿՆԵՐ, ՄԱՆԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՀՐԱԽԱՂՈՒԹԻՒՆ.

Օ-դը-կոլոն, և հոտաւէտ օծանելիք գեղեցիկ սրուակներում: Մեծ քանակութեամբ զանազան կօսմետիական և վարսավիրական ապրանքներ, ռուսաց և արտասահմանեան գործարաններից:

ՀԵՌԱԳԻՐ

Պատիւ ունեմ յայտնելու ԹԻՖԼԻՍԻ յարգելի հասարակութեանը, որ ՄԱԴԱԹԵԱՆ կղզու վրա կառուցված նոր շինութեան մէջ, շուտով բացվելու է ՄԵԾ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԱՆՈՑ, որ բաղկացած է աշխարհիս ամեն երկիրներից բերված ամենաընտիր և ամենագեղեցիկ տեսակների բազմաթիւ կենդանիներից և դաղաններից, որոնց թւում կան՝ գիշատիչ, մսակեր, խոտակեր, կրծող, սողուն կենդանիներ, նոյնպէս կապիկներ, կրօկոդիլներ, օձեր և զանազան տեսակների թռչուններ: Բացի դրանից, կենդանանոցի մէջ լինելու է ԿԱՊԻԿՆԵՐԻ, ՇՆԵՐԻ, ՊՕՆԻՆԵՐԻ (փոքրիկ ձիերի) և ԱՅԾԵՐԻ թատրօն: Կենդանանոցի մէջ գտնվում է և ՎԱՐԺՎԱԾ ՓԻՂԸ:

Ներկայացման օրվայ մասին կը յայտնվի առանձին յայտարարութիւններով:

Թիֆլիսի հասարակութեանը իմ յարգանքներս մատուցանելով մնամ

Կառավարիչ կենդանանոցի Ֆ. Ի. ՖԷՅ

5—10

ՆՈՐ ԳԻՐՔ. (ՌՈՒՍԵՐԷՆ ԼԻԶՈՒՈՎ)

ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՀԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Ս. Բահաթրեանի. 1 հատ: Գինը 35 կ: Թիֆլիսի գրավաճառանոցներում: 10 աւելի առնողներին 20% զիջումն կը լինի կենտրոնական գրավաճառանոցում:

5—30

Պատկերազարդ ԴԱՍԱԳԻՐՔ-ԻՆՔՆԱՈՒՍՈՒՅՑԻ **ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ** Լ. Խանազատեանցի. գրավաճառների մօտ 20 կոպէկ:

23—24 (Հ.)

Дозволено цензурою, Тифлисъ 24 Декабря 1886 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз.